մէջ, ազատ և շռայլ կեանք մ'անցընելով հոն։ Այդ յոռի սովորութիւնն ալ կը պախարակէ սուրբ հայրապետը և կը սպառնայ որ «թէ իցէ ոք՝ որ յանդգնեսցի առնել, ի կարգէն իւրմէ դադարեալ լիցի[1]»։

9. — Սովոր էին դարձեալ քահանայք՝ առանց ո՛ և է հարկի՝ շինականներուն տուները տանիլ Ս. Խորհուրդը և հոն հաղորդել զիրենք։ Այդ անպատեհ սովորութիւնն ալ կ'արգիլէ, թոյլ տալով որ միայն ծանր և օրհասական հիւանդներուն տարուի՝ ամէն պատշաճ յարգանքով և երկիւղածութեամբ՝ զիրենք հաղորդելու[2]։

10. — Պսակի խորհուրդն ալ իր սրբութեան, բարձրութեան և լրջութեան մէջ պահուած չէր։ Քահանաները թեթեւօրէն կ'օրհնէին անխելահաս տղոց և աղջիկներու պսակը, որոնք անգէտ տակաւին իրենց վիճակին պարտականութեանց և առանց իրարու փոխադարձ հաւանութեան, լոկ ծնողներուն ստիպումով կ'ամուսնանային, որով կ'արհամարհուէր խորհուրդը և ծանր հետեւանքներ առաջ կու գային։ Այն բոլոր խորհրդածութիւնները կ'ընէ Ս. Սահակ իր կանոններուն մէջ և կը պատուիրէ քահանայից, «Ցղայոց ամենեւին իսկ պսակ մի՛ օրհնէք մինչեւ ի կատարումն հասակին. իսկ կատարելոցն՝ որոց չիցէ զմիմեանս տեսեալ... պսակ մի՛ իշխէք դնել առանց քննութեան և զնոսին ինքեանս հարցանելոյ... իսկ թէ ոք ի քահանայից յանդգնի և արտաքոյ մերոյ հրամանի այնպիսեացն պսակ օրհնեսցէ, զիտասցէ զի քահանայն պատուհաս կրէ ըստ օրինակի վնասակարացն[3]»։

11. — Ինչպէս ժամանակով Ս. Ներսէս խստիւ արգելած և գրեթէ ջնջած էր այն հեթանոսական սովորութիւնը, որով՝ մեռեալներուն յուղարկաւորութեան առթիւ՝ կը չափազանցէին եղերամայրերը իրենց լացն ու կոծը, մազերնին փետելով, զգեստնին ձրձելով, — և թաղումէն վերջը՝ ներհակ չափազանցութեամբ՝ կ'ուտէին, կը խմէին, կը պարէին, — կը շարունակէր այդ սովորութիւնը մինչեւ Ս. Սահակի օրերը, որ կը սաստէ ու կ'արգիլէ, թէ «գինըմպելիս ի լալիս մի՛ արասցեն, աշխարհ ի վերայ մեռելոցն մի՛ ոք առցէ, քանզի զիւական են ամենայն այդպիսի իրք[4]»։

12. — Ս. Սահակ իր Կանոններուն մէջ, ո՛չ նուազ անաչառ և շահեկան խրատներ և յորդորներ կու տայ նաեւ վանականներուն, իրենց կարգին համաձայն սուրբ վարք մ'ունենալու, հրեշտակօրէն ապրելու, իրենք զիրենք եղբայրսիրութեան և օտարսիրութեան նուիրելով, փախչելու երկրաւոր և աշխարհիկ հաճոյքներէ, պարապելու միայն Աստուծոյ և աստուածային իրերու և ամէն առաքինութեանց օրինակ ընծայելու իրենց անձը[5]։ Կը խօսի դարձեալ մանրամասնօրէն անոնց պարտականութեանց և իրաւունքներու մասին, ինչպէս նաեւ այն նուէրներուն վրայ, զորս կու տար ժողովուրդը ի նպաստ վանքերուն ու եկեղեցիներուն, թէ ինչպէս արդարօրէն և հաւատարմաբար պիտի բաշխուէին անոնք իւրաքանչիւրին արժանիքին, իրաւունքին և պէտքերուն համեմատ։

13. — Ի վերջոյ վարդապետօրէն կը խօսի ծէսերու, արարողութեանց և կրոնական հանդէսներու վրայ, — եկեղեցիներու, ժողովրդանոցներու և հիւրանոցներու մասին, բացատրելով համառօտիւ անոնց հաստատութեան նպատակը։ Կը թուէ մի առ մի տարուոյն գլխաւոր տօները, լուսաբանելով անոնց խորհուրդներն ու յիշատակները, և յորդորելով որ սուրբ պահեն այդ օրերը, կատարելով իրենց հոգեւոր պարտքերը և տալով՝ ըստ իւրաքանչիւր կարողութեան՝ իրենց նուէրները ի նպաստ վանքերուն ու եկեղեցիներուն։

Այս և նման կանոններով ու խրատներով՝ լիովին յաջողեցաւ Ս. Սահակ վերանորոգել ու պայծառացնել հայկական

1. Կանոնք Ս. Սահակայ. ժ. էջ 93–94։
2. Անդ. ԺԲ. էջ 94։
3. Անդ. ԺԵ. ԺԶ. էջ 95–96։
4. Անդ. ԻԱ. էջ 98–99։
5. Անդ. ԻԳ. էջ 99։